

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2022

ԱՄՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ



<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>3</b>
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....	4
1.1.1. Ջրահեռացման համակարգի կառավարում .....	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում .....	6
1.3. Ջրահեռացման համակարգ .....	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	8
1.5. Էներգահամակարգ .....	8
1.6. Մեքենա-մեխանիզմներ .....	9
<b>2. Առևտրային տնօրինություն</b> .....	<b>10</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	11
2.2. Հասույթ .....	11
2.3. Գանձում .....	12
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/ .....	13
2.5. Ջրաչափեր .....	14
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում .....	15
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>16</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	17
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	18
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	20
3.4. Ջրատար համակարգի բարելավում .....	20
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն .....	24
3.6. 1-85 թեժ գիծ .....	25
<b>4. Լրատվական ծառայություն</b> .....	<b>26</b>
<b>5. Որակի, առողջության և անվտանգության բաժին</b> .....	<b>29</b>
5.1. Դասընթացներ/սեմինարներ .....	30
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում .....	31
5.3. Բժշկական գննություններ և հետազոտություններ .....	32
5.4. Համագործակցություն ՀՀ ԱԻ նախարարության, մարզպետարանների, ՏԻՄ-երի և այլ գերատեսչությունների հետ .....	33
5.5. Արտադրական վտանգավոր օբյեկտների և վկայագրերի փորձաքննության աշխատանքներ .....	33
<b>6. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ</b> .....	<b>34</b>
6.1. Համակարգչային ցանց .....	35
6.2. Ինտերակտիվ համակարգ .....	35

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

- «Հարավ» տեղամասի աշխատակիցների կողմից Ներքին Չարբախ 3-րդ փողոց 1-ին նրբանցք հասցեում  $d=50$ մմ  $L=100$ գծ/մ պողպատե քայքայված ջրագիծը փոխարինվել է  $d=50$ մմ  $L=100$ գծ/մ պոլիէթիլային խողովակով, թվով 8 բաժանորդի համար իրականացվել են անհատական միացումներ  $d=25$ մմ  $L=70$ գծ/մ ընդհանուր երկարությամբ:



- «Երեբունի Տեղամասի աշխատակիցների կողմից «Արին Բերդի» ՕԿՁ-ի չոր խցում տեղադրվել են թվով 2  $d=400$ մմ էլեկտրաշարժաբեր փականներ, ինչը առավել կառավարելի է դարձրել վարչական տարածքի ջրամատակարարումը:

- «Արաբկիր» տեղամասի աշխատակիցների կողմից Ն. Տիգրանյան և Զարյան փողոցների խաչմերուկում իրականացվել են  $d=400$ մմ տրամագծով ճնշման կարգավորիչ փականի տեղադրման աշխատանքներ՝ ցանցը ավելի կառավարելի դարձնելու նպատակով: Վերակառուցվել է նաև փականային դիտահորը:

### Գեղարքունիքի մարզ

- «Սևան» տեղամասի աշխատակիցների կողմից ք.Սևան, Էներգետիկներ և Կոմիսարներ փողոցների խաչմերուկում իրականացվել են ջրագծի վերակառուցման աշխատանքներ ( $d=219$ մմ  $L=33$ գծմ պողպատե խողովակի մոնտաժում):



### Սյունիքի մարզ



- «Կապան» տեղամասի կողմից՝ որպես բարի կամքի դրսևորում, ք.Կապան, Մ.Հարությունյան փողոցի 8-րդ շենքի ներքին ցանցում իրականացվել են վթարավերականգնողական աշխատանքներ ( $d=50$ մմ,  $L=1$ գծմ):



## Արմավիրի մարզ

● «Էջմիածին» տեղամասի կողմից Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի Երիտասարդական փողոցի  $d=80$ մմ  $L=150$ գծմ պողպատե քայքայված խողովակաշարը փոխարինվել է  $d=63$ մմ  $L=150$ գծմ պեթ և  $d=20$ մմ  $L=120$ գծմ խողովակաշարով, ինչպես նաև Արմավիրի մարզի, Ոսկեհատ համայնքի 11-րդ փողոցի  $d=50$ մմ  $L=100$ գծմ անորակ պեթ խողովակաշարը փոխարինվել է  $d=50$ մմ  $L=100$ գծմ պեթ խողովակաշարով: Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ համայնքների ջրամատակարարումը կարգավորվել է, ապահովվել է նշված փողոցների բաժանորդների անխափան ջրամատակարարումը, վերացվել են ջրակորուստները, կատարվել է ցանցի աշխատանքների ճիշտ գնահատում, տեղի է ունեցել հասույթի աճ, շահագործումից հանվել է  $L=250$ գծմ ջրագիծ:



## Արարատի մարզ

«Արտաշատ» տեղամասի կողմից իրականացվել են ջրագծերի վերակառուցման աշխատանքներ Արարատի մարզի Կանաչուտ, Դալար, Դեղձուտ բնակավայրերում:

● Կանաչուտ բնակավայրի Պ.Սևակ փողոցի ջրագիծը կառուցվել էր 2010թ-ին՝ պեթ  $d=160$ մմ ստանդարտին անհամապատասխան խողովակներով, որոնք պիտանի չէին հետագա շահագործման համար: Աշխատակիցների կողմից Պ.Սևակի փողոցում վերակառուցվել են պեթ  $d=160$ մմ  $L=400$ գծմ,  $d=20$ մմ  $L=90$ գծմ,  $d=20-160$ մմ  $L=490$ գծմ ջրագծեր, տեղադրվել են բրոնզե փականներ՝ թվով 4  $d=15$ մմ, շահագործումից հանվել են պեթ  $d=20-160$ մմ  $L=490$ գծմ ջրագծեր:



● Դալար բնակավայրի Արամ Մանուկյան փողոցում կառուցվել են պեթ  $d=160$ մմ  $L=825$ գծմ,  $d=90$   $L=400$ գծմ,  $d=20$ մմ  $L=220$ գծմ ջրագծեր, տեղադրվել են ջրաչափական դիտահորեր՝ թվով 14, տեղադրվել են բրոնզե փականներ՝ թվով 43  $d=15$ մմ, շահագործումից հանվել են պեթ  $d=90-110$ մմ  $L=1445$ գծմ ջրագծեր:



● Դեղձուտ բնակավայրի Չարենցի փողոցում վերակառուցվել են պեթ  $d=63$   $L=390$ գծմ,  $d=20$ մմ  $L=250$ գծմ,  $d=25$ մմ  $L=23$ գծմ ջրագծեր, տեղադրվել են ջրաչափական դիտահորեր՝ թվով 24, բրոնզե փականներ՝ թվով 5  $d=15$ մմ, թվով 24  $d=15$ մմ ջրաչափեր, շահագործումից հանվել են մետաղական  $d=50$ մմ  $L=563$ գծմ ջրագծեր:

### 1.1.1. ՋՐԱՇԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

## Գեղարքունիքի մարզ

● «Սևան» տեղամասի կողմից իրականացվել են կոյուղու դիտահորերի վերանորոգման աշխատանքներ՝ ք.Սևան, Նաիրյան 141 (տեղադրվել է դիտահորի ծածկ), Գրիբոյեդովի 3 հասցեներում (տեղադրվել է դիտահորի պատի օղակ, կատարվել է հատակի բետոնացում, պատերի վերակառուցում), ինչպես նաև իրականացվել են կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ ք.Սևան, Գրիբոյեդով 3 ( $d=250$ մմ  $L=11$  գծմ պեթ ծալքավոր խողովակի մոնտաժում) և Գագարինավան Գայի 2 ( $d=200$ մմ  $L=12$  գծմ պեթ ծալքավոր խողովակի մոնտաժում) հասցեներում:



● «Վարդենիս» տեղամասի կողմից Վարդենիս քաղաքի Վ.Համբարձումյան փողոց 3-րդ նրբանցքում կառուցվել է  $d=400$ մմ  $L=50$ զձմ կոյուղատար համակարգ, քանի որ նախկին կոյուղատար համակարգը գտնվում էր քայքայված վիճակում և պիտանի չէր հետագա շահագործման համար:



Հոկտեմբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	2625
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	67014
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	53469
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	20499
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	1
Շահագործումից հանված ջրագիծ	մ	4793.67
Կառուցված ջրագիծ	մ	6232.17
Կառուցված կոյուղագիծ	մ	640.1
Վերացված գաղտնի վթարներ	հատ	17
Փոխարինված փական	հատ	36
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	273
Մաքրված դիտահոր	հատ	633
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	11.7
<i>Վերացված վթարներ</i>	<i>Չափման միավոր</i>	<i>Քանակ</i>
Ջրամատակարարման ցանցում	հատ	937
Ջրահեռացման ցանցում	հատ	1225
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Հոկտեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	1,086	1,013	889

## 1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հոկտեմբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									
	15	20	25	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	182	3	1	1	0	3	0	0	0	190
Փոխարինված	139	17	17	9	0	13	0	2	0	197
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	283	6	0	1	1	1	1	0	1	294
Ընդամենը	604	26	18	11	1	17	1	2	1	681

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր է տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 681 ջրաչափ: Կատարված աշխատանքների 89 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

### 1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հոկտեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	0	276	0
2	Քանաքեռ-Զեյթուն	0	243	0
3	Մաշտոց	90	247	3
4	Շահումյան	260	227	30
5	Շիրակ	770	379	28.5
6	Արթիկ	60	98	6
7	Ապարան	0	29	0
8	Ալավերդի	390	16	0
9	Աշոցք	0	3	0.6
10	Բերդ	60	9	0
11	Իջևան	0	47	6
12	Լոռի	0	180	6
13	Նոյեմբերյան	0	16	0
14	Սպիտակ	0	14	0
15	Ստեփանավան	1385	18	0
16	Թալին	0	17	6
17	Տաշիր	0	4	0
18	Չարենցավան	0	67	0
19	Աբովյան	0	102	18
20	Հրազդան	100	107	111
21	Կենտրոն	730	247	6
22	Հյուսիս	50	237	22
23	Հարավ	0	383	0
24	Էրեբունի	60	173	0
25	Արմավիր	0	117	2,2
26	Արտաշատ	0	0	0
27	Էջմիածին	50	87	0
28	Աշտարակ	2440	32	0
29	Արարատ	0	0	6
30	Մասիս	0	0	120
31	Գավառ	0	19	0
32	Սևան	70	56	23
33	Մարտունի	0	21	0
34	Վարդենիս	310	14	100
35	Ճամբարակ	0	16	0
36	Դիլիջան	0	35	94
37	Վայք	0	15	0
38	Եղեգնաձոր	0	6	0
39	Զերմուկ	0	55	0
40	Սիսիան	0	36	0
41	Գորիս	0	36	7
42	Կապան	0	90	17
43	Մեղրի	0	26	6
	Ընդամենը	6825	3800	616.1

## 1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Սևանի N3 կեղտաջրերի պոմպակայանի պոմպերից մեկը խցանվել էր, որի պատճառով պոմպի արտադրողականությունն ընկել էր: Արդյունքում պոմպը դուրս բերվեց հորից, մաքրվեց խցանված աղբը և կրկին տեղադրվեց հորում: Շարքից դուրս էր եկել պոմպերի դուրս բերման համար նախատեսված էլեկտրական ամբարձիչը, որը փոխարինվեց նորով և այժմ պոմպակայանը աշխատում է բնականոն ընթացքով:

- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանի պոմպերից մեկը դադարել էր աշխատել, որի զննության արդյունքում պարզ դարձավ, որ էլեկտրական թողարկիչը այրվել էր, որն էլ փոխարինվեց նորով: Ապամոնտաժվեցին և մաքրվեցին բոլոր հակադարձ փականները և այժմ պոմպակայանը աշխատում է բնականոն ընթացքով:

- Մարտունիի կեղտաջրերի մաքրման կայանի հոսանքի ֆագերից մեկը բացակայում էր, որի պատճառով սարքավորումները չէին աշխատում: Չննության արդյունքում պարզ դարձավ, որ բարձր լարման ապահովիչը այրվել էր, որն էլ փոխարինվեց նորով և այժմ մաքրման կայանն աշխատում է բնականոն ընթացքով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	65,163	10,8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	55,321	16,2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	153,254	5,4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	92,665	10,8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	103,124	9,9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	19,985	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	13,184	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	9,350	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	2,250	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	3,457	0	0

## 1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 342 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 256 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՁ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ: Թվով 11 հասցեներում հայտնաբերվել են ջրագծի վթարներ:




## 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար հոկտեմբեր ամսվա ընթացքում նորոգվել են թվով 4 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճուլանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 4 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսատնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:



Փոխարինվել են թվով 39 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, գտիչներ, արգելակման հեղուկ և քսայուղեր:

Թվով 50 անվադող նորոգվել է, փոխարինվել և հավասարակշռվել է:

Թվով 5 մեքենա-մեխանիզմի մարտկոց փոխարինվել է նորերով:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 2 մեքենայի վրա, փոխարինվել են հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:



Թվով 2 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 2 մեքենայի վրա իրականացվել է գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Թվով 10 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 3 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամումի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Թվով 2 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Թվով 2 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Նորոգվել է թվով 2 մեքենայի փոխանցման տուփը, փոխարինվել է ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Եռակցման աշխատանքներ են իրականացվել թվով 3 մեքենա-մեխանիզմի վրա:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ





## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.11.2022թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 588,754 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2022թ. հոկտեմբեր ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	676,512	562,015	83,1
	Իրավաբանական անձ	31,082	26,739	86,0

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	737,249	604,019	81,9
	Իրավաբանական անձ	36,412	26,575	73,0

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 818 նոր բաժանորդ:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հոկտեմբեր ամսվա ընթացքում ստուգաչափվել է 4481 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 10.2022
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2177	1726	259	4162
	Իրավաբանական անձ	191	109	19	319
	Ընդամենը	2368	1835	278	4481

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ հոկտեմբեր ամսին փոխարինված 4481 ջրաչափերի մոտ 47 %-ը (կամ 2112 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 290,778 մ<sup>3</sup> հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2022թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ:

Հասույթ



### 2.3 ԳԱՆՁՈՒՄ

Հոկտեմբեր ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,575 մլն՝ դրամ (95 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում նախկինում կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում,

ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը հաշվետու ամսին գերծ է փասցել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ՝ SMS-հաղորդագրությունները):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

## 2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Հոկտեմբեր ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 263 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 31.8 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ խոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2022թթ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
12787	1515648365	8241	827430864	158	20991281	4441	678220701	5568	576914104

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 64 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 1 %-ը մերժված:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.11.2022թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	10,153	2,491
Բնակիչ-բաժանորդներ	7,254	1,655
Իրավաբանական անձեր	2,899	836

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 361.9 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2022 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ



2.5 ՋՐԱՀԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.11.2022թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	705,854	602,589	85.37	35,327	26,565	75.20
	Առանց ջրաչափի	31,395	1,430	4.55	1,085	10	0.92

Տվյալների բազայում 01.11.2022թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	877,271	395,558	45.09	39,098	11,212	28.68

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 5864 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1285 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2414	1983	81.9
գ.Պոռշյան	1645	1120	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	5950	1898	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 12961, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 12690, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 2613, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 3011, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2137, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 2927 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 5283 ջրաչափական սարք:

## 2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրվում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	334	200,137	37,316,820

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ






### 3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի հոկտեմբերի ամսվա (15-ի դրությամբ) շարունակականություն տվյալը կազմել է՝ 96.8%, ինչը 0.1% ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել է թվով 71 ճԿՓ: Ստորև ներկայացված է կարգաբերված ճԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը:




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2022թ-ի հոկտեմբեր ամսին, 2021 թ. նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 212 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 571 հազար կՎտ-ով ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում:



### 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը, անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ, Երևան քաղաքում նվազել է 20273 կՎտ.ժ (1.17 %), այն դեպքում երբ նորակառույց շենքերի 15 պոմպակայան ավելացել է «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ Սյդ 15 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 7515 կՎտ.ժ: Իսկ առանց այս պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը կնվազեր 27788 կՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

#### Ուսումնասիրված հասցեներ

Հաշվետու ժամանակահատվածում 74 հասցեում կատարվել են էլ. հաշվիչի ընթերցման, ցուցմունքների գույքագրման աշխատանքներ: Կատարվել է փոխադարձ ակտերից էլ. էներգիայի ծախսերի դուրսբերում, մշակում և վերլուծություն, «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ փաստաթղթաշրջանառության կազմակերպում:

● Գյումրի քաղաքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 714 կՎտ.ժամ 2.4%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ




#### Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 31 խոշոր պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 15 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Թվով 342 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 256 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՋ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ: Թվով 11 հասցեում հայտնաբերվել են ջրագծի վթարներ:

#### Ինվերտորների տեղադրում

Տեղադրված ընդհանուր 150 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 15,270 կՎտ.ժ կամ 6%:




**Խոշոր պումպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ**

● Հաշվետու ժամանակահատվածում 18 խոշոր պումպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:


● 2022թ. հոկտեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պումպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 665 434 ԿՎտ/ժամ (72,76%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

**Երևան քաղաքի ջրարտադրության պումպակայանների սպառած էլ. էներգիա**




● Մարզերի ջրարտադրության պումպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 14 064 ԿՎտ.ժ/ամիս կամ 0,73%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

**Մարզերի ջրարտադրության պումպակայանների սպառած էլ. էներգիա**



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 716 365 ԿՎտ.ժ կամ 17,89 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

**«Վեդիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա**



### 3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են հոկտեմբեր ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Ջրամատակարարման համակարգերի և համայնքների վերաբերյալ ԱՏՀ-ում ստեղծված տվյալների բազանների միավորում, թարմացումներ և լրացումներ	Գյուղեր և քաղաքներ	17
Արմավիրի մարզի 5 համայնքների ՊԿԱԾ-ների ժամանակ վերակառուցված մոտ 600 բաժանորդների ջրաչափական դիտահորերի և ներտնային միացումների մուտքագրում ԱՏՀ	բաժանորդ	600
ՀՀ բնակավայրերի, մասնավորապես Արմավիրի մարզի Վեոլիա Ջուր սպասարկվող բնակավայրերի փողոցների և շենք/շինությունների թվային շերտերի թարմացում և բազավորում	մարզ	1
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	266
Երևան քաղաքի Կենտրոն համայնքի ջրագծերի ուղղումներ և թարմացումներ՝ տեղամասից բերված տվյալների հիման վրա	քաղաք	1
«Վեոլիա Ջուր» ընկերության ենթակայության տակ գտնվող պետական գույքի տեղադիրքերի թվայնացում և բազավորում՝ սեփականության վկայականների հիման վրա	հատ	50
Ջրագծի կառուցում	մետր	1321
Շահագործումից հանված ջրագիծ	մետր	2040
Տեղադրված կամ փոխարինված փականներ	հատ	48
«Արևելք» և «Արևմուտք» ՇՏ-ների կողմից օգոստոս ամսին կատարված ջրամատակարարման և կոյուղատար ցանցում կատարած աշխատանքների համակարգում, համապատասխան ծագրերի կազմում և մուտքագրում ԱՏՀ	ՇՏ	2
Qfield Cloud հավելվածի ուսումնասիրություն, նոր նախագծի կազմում	հավելված	1
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական կետերի ուղղում	կետ	1841
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական կետերի ուղղում	կետ	88
Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2462
Մարզային ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	8914
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	80
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	991
Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1781
Մարզային կոյուղու երկարությունը	կմ	1805

### 3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հոկտեմբեր ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը:

#### Արզնի 2 ջրատար

Հաշվետու ամսվա ընթացքում ընթացել են ջրատարի վթարված հատվածը նոր կառուցված հատվածով փոխարինելու աշխատանքներ: Կանգառի ընթացքում վերականգնվել է վթարված օդահեռը: Ջրատարի աշխատանքի վերականգնումից հետո նոր հատվածի վրա առաջացել էր վթար, որը վերացվել է ՇՏ աշխատանքների կողմից:



#### Գառնի-Երևան

Ջրատարի շրջայցի ժամանակ հայտնաբերվել է ≈20լ/վ վթար՝ «Նուբարաշեն-Արին Բերդ» ՕԿՋ հատվածում: Տեղում առկա էր նաև ջրատարի ճզմված հատված: Կազմակերպված կանգառի ընթացքում փոխարինվել է ճզմված հատվածը, և վթարը վերացվել է:



### Արին Բերդ-Խարբերդ

Ջրատարի վրա հայտաբերվել են վթարներ, որոնք վերանորոգվել են ՇՏ-ի կողմից: Տնտեսվել է  $\approx 5$ լ/վ ջրաքանակ:

Ընթացիկ ամսում նաև կատարվել են ջրաքանակների կարգավորման աշխատանքներ:



### Գոտիավորման աշխատանքներ

#### Քաղաք Արթիկ

● Քաղաք Արթիկի Բարաջանյան փողոցում գտնվող մի քանի առանձնատների ջրամատակարարումն ապահովելու նպատակով շահագործվում էր շուրջ  $L=2000$ մ երկարությամբ պողպատե հին, քայքայված ջրագիծ: Այդ իսկ պատճառով Բարաջանյան փողոցի բնակիչների համար կառուցվել է  $D=40$ մմ, ՊԷ  $L=70$ մ ՊԷ նոր ջրագիծ ջրաչափական հորերի տեղադրումով, ինչի արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է  $D=200$ մմ  $L=2000$ մ պողպատե ջրագիծ, տնտեսվել է  $Q=7-8$ լ/վ ջրաքանակ:



#### Քաղաք Գյումրի

● Գյումրիի Անի թաղամաս 11-րդ փողոց 9/1 հասցեում արձանագրված վթարն առաջացել էր հին, չշահագործվող կաթսայատան մեջ խցափակված ջրագծի վրա, որի սնուցումը տարիներ շարունակ դադարեցված չէր: Շիրակ տեղամասի կողմից այն խցափակվել է միացման կետում՝ շահագործումից հանելով  $D=125$ մմ պողպատե ջրագիծ և տնտեսելով  $Q \approx 10$ լ/վ ջրաքանակ:



● Գյումրիի Ն. Շնորհալի փողոցի հիմնանորոգման ժամանակ ի հայտ եկած հին, վթարված ջրագիծն ուսումնասիրվել է: Պարզվել է, որ այն դեռևս սնուցվում է գործող  $D=300$ մմ պողպատե ջրագծից: Արդյունքում Շիրակ տեղամասի կողմից խցափակման եղանակով շահագործումից հանվել է  $D=50$ մմ  $L=250$ մ պողպատե ջրագիծ՝ տնտեսելով  $Q=2-3$ լ/վ ջրաքանակ:





## Քաղաք Մարտունի

● «Մարտունի» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է արտահոսք Հոպոյի Վար ՕԿՋ-ի  $D=200$ մմ թողակից: «Մարտունի» ՇՏ-ի կողմից փոխարինվել է հին փականը՝ արդյունքում տնտեսելով  $Q = 5$ լ/վ ջրաքանակ:



● «Մարտունի» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Չարենց 23 տան մոտով անցնող,  $D = 63$ մմ ՊԷ ջրագծի վրա: Մարտունի ՇՏ-ի կողմից վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q = 5$ լ/վ ջրաքանակ:

## Քաղաք Դիլիջան

● Դիլիջան քաղաքի Ֆրոլովո մաքրման կայանի ելքի ջրաքանակի ավելացման դեպքում  $Q \approx 8$ լ/վ ջրաքանակ լցվում էր «Կաղնի Խաչ» չշահագործվող, հին ջրամբար: «Դիլիջան» ՇՏ-ի ու Գոտիավորման վարչության համատեղ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում ճնշումների կարգաբերման և Ֆրոլովո ՋՄԿ-ի ելքի ջրաքանակի պակասեցնելու արդյունքում կանխվել է  $Q=15$ լ/վ ծավալով հոսակորուստ:



## Քաղաք Երևան

● Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ իրականացված աշխատանքների արդյունքում խցափակվել են բնակիչների տարածքներով անցնող, պողպատե  $D = 200$ մմ,  $L = 140$ մ ջրագիծը, ինչպես նաև թվով 15 ապօրինի միացումներ: Արդյունքում տնտեսվել է  $Q = 6$ լ/վ ջրաքանակ:



● «Մաշտոց» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Շինարարների 15/1 շենքի մոտով անցնող  $D = 50$ մմ, պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացվեց փոխարինելով նշված ջրագծի  $L=12$ մ երկարությամբ հատվածը: Արդյունքում տնտեսվել է  $Q = 3$ լ/վ ջրաքանակ:








● «Մաշտոց» ՇՏ-ի հետ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Եղվարդի խճուղի, Անաստաս Միկոյան 27 շենքի մոտով անցնող  $D=50$ մմ, անհայտ պողպատե ջրագծի վրա: Վթարված ջրագիծը խցափակվել է միացման կետից: Արդյունքում տնտեսվել է  $Q = 1$ լ/վ ջրաքանակ:

● «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Չեխով 35/1 շենքի մոտով անցնող  $D=250$ մմ, թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q = 4$ լ/վ ջրաքանակ:





● «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է  $D=40$ մմ անհայտ, պողպատե միացում Շիրակ 3-րդ նրբանցքում գտնվող «IN-VI» ՍՊԸ –ի մոտ, որով այդ պահին հոսել է  $Q = 2$ լ/վ ջրաքանակ: Միացման կետից խցափակելուց հետո տնտեսվել է  $Q = 2$ լ/վ ջրաքանակ:

● «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված աշխատանքների արդյունքում Արարատյան փողոցում ներարկման միջոցով փոխարինվել է վթարային  $D= 100$ մմ պողպատե միացումը  $D= 63$ մմ ՊԷ խողովակով,  $L= 30$ մ: Արդյունքում տնտեսվել է  $Q=10$ լ/վ ջրաքանակ և վերականգնվել է Վերին Շենգավիթ 19/1 շենքի ջրամատակարարումը:



● «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված աշխատանքների արդյունքում Ավան, Դուրյան թաղամասի Բյուրուսկի թաղ 62 շենքի  $D=80$ մմ մուտքագծի վրա հայտնաբերվել է գաղտնի վթար: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q = 1$ լ/վ:

● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված աշխատանքների արդյունքում Ամիրջան 28 շենքի բակում  $D=250$ մմ թուջե ջրագծի վրա հայտնաբերվել է գաղտնի վթար: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q = 6$ լ/վ:



### 3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Քաղաք Գառնիի Օգոնակայան քլորակայանում հեղուկ քլորի տրման ք. Արտաշատ գնացող քլորագծի մղման հնամաշ և ճնշում չապահովող պոմպը փոխարինվել է նորով, հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● Լոռի մաքրման կայանի քլորակայանում հեղուկ քլորի տարայի ճնշման վերահսկումն իրականացնելու նպատակով, հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած վակուում կարգավորիչի մանումետրը փոխարինվել է նորով:

● Քաղաք Իջևանի Ազատամուտ քլորակայանում հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով Easiflo հիպոքլորիդի հաբի սարքավորման ֆասաված փականները փոխարինվել և վերանորոգվել են:



● Արթիկի քաղաքային քլորակայանում արդեն իսկ հնամաշ և շարքից դուրս եկած քլորագծի խողովակներն ապամոնտաժվել և մոնտաժվել են հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● Քաղաք Երևան, Ավան Բաբաջանյան 3/1 հասցեում հեղուկ քլորի տրման մաշված խողովակը մոնտաժվել է նորով պահեստային կոնտեյներների և բալոնների համար:




● Քաղաք Չարենցավանի «Ճանտան» քլորակայանում հիպոքլորիդի հաբի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով, տեղադրվել է ճնշման կարգավորիչ՝ մտնող ջրաքանակի ճնշման կարգավորման և սարքի ճիշտ օգտագործմանն անհրաժեշտ Easiflo հիպոքլորիդի հաբի համակարգի կարգավորման համար:



### 3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 42269 զանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 12046 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 9580 զանգ (79,5%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2466 զանգ (20,5%):
- Շահագործման վերաբերյալ ստացվել է 30223 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 23317 զանգ (77,1%), իսկ մարզերինը՝ 6906 զանգ (22,9%):



185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիր

	Ստորաբաժանում	2021 հոկտեմբեր	2022 հոկտեմբեր	
<b>Առևտրային</b>	<b>Ընդամենը</b>	<b>11270</b>	<b>12046</b>	<b>6.89%</b>
	Երևան	<b>9039</b>	9580	5.99%
	Մարզեր	<b>2231</b>	2466	10.53%
<b>Շահագործում</b>	<b>Շահագործում</b>	<b>24378</b>	<b>30223</b>	<b>23.98%</b>
	<b>Երևան</b>	<b>17759</b>	<b>23317</b>	<b>31.30%</b>
	Արաբկիր	<b>2537</b>	5354	111.04%
	Քանաքեռ-Զեյթուն	<b>1679</b>	2616	55.81%
	Մաշտոց	<b>3926</b>	3151	-19.74%
	Շահումյան	<b>1835</b>	1667	-9.16%
	Շենգավիթ	<b>1727</b>	3197	85.12%
	Կենտրոն	<b>1634</b>	2914	78.34%
	Հյուսիս/Ավան Կոր Կորթ/	<b>1886</b>	2888	53.13%
	Էրեբունի	<b>2535</b>	1530	-39.64%
	այդ թվում կոյուղու վթար	<b>120</b>	213	77.50%
	այդ թվում դիտահորի խցանում	<b>4175</b>	7311	75.11%
	<b>ՄԱՐԶԵՐ</b>	<b>6619</b>	<b>6906</b>	<b>4.34%</b>
	Հարավ	<b>3706</b>	3179	-14.22%
	Հյուսիս	<b>2913</b>	3727	27.94%
	այդ թվում կոյուղու վթար	<b>50</b>	69	38.00%
	այդ թվում դիտահորի խցանում	<b>2479</b>	2428	-2.06%
<b>Ընդամենը</b>	<b>35648</b>	<b>42269</b>	<b>18.57%</b>	


- 2021թ. հոկտեմբերի համեմատ՝ 2022թ. հոկտեմբեր ամսին 6,89%-ով ավելացել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակն ավելացել է 23,98 %-ով:
- 2021թ. հոկտեմբերի համեմատ՝ 2022թ. հոկտեմբեր ամսին 109%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, 26 %-ով՝ ավելացել է 5 րոպեից ավել զանգերի քանակը և 251 %-ով ավելացել է հայտարարությունների լուսն ավտոմատ ծառայության միջոցով, ինչն էլ վկայում է այն մասին, որ բաժանորդները ջրանջատման մասին տեղեկատվությանը փորձում են ծանոթանալ լսելով տեղադրված պլանային և վթարային ջրանջատումների ձայնագրությունները:
- 2021թ. հոկտեմբերի համեմատ՝ 2022թ. հոկտեմբեր ամսին 38,78%-ով ավելացել են ջրամատակարարման բողոքները:



ԼՐԱՏՎԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Եղանակային փոփոխությունները հոկտեմբերին դրականորեն ազդեցին հանրապետությունում ջրամատակարարման վիճակի վրա ու նվազեցրին սպառողների բողոքները, ինչն իր արտահայտությունը գտավ նաև Հանրային կապերի բաժնի /ՀԿԲ/ աշխատանքում:



Խոսքն առաջին հերթին վերաբերում է տարբեր բնակավայրերում ջրի անբավարարության վերաբերյալ լրատվամիջոցներից ստացվող ահազանգերի կրճատմանը, ինչպես նաև անձամբ իրենց հուզող խնդիրները լուծելու լրագրողների դիմումներին:

Մակայն այդ նույն ընթացքում որոշակիորեն նվազեցին նաև համակարգում տարվող աշխատանքների վերաբերյալ հրապարակումները, որը նախ և առաջ պայմանավորված է ինչպես ընթացիկ տարվա ՊԿԱԾ-ով, այնպես էլ շահագործման տեղամասերի ու տեխնիկական տնօրինության ուժերով իրականացվող ջրաշինարարական ծրագրերի քանակի նվազմամբ: 2022 թվականի համար նախատեսված աշխատանքների զգալի մասը ՎեոլիաԹիմի ակտիվության և առաջանցիկ տեմպերով գործելու շնորհիվ արդեն ավարտվել էր կամ ավարտվում էր, իսկ նորերը մեկնարկել աշնանային եղանակներով պայմանավորված, հատկապես նախալեռնային ու լեռնային գոտիներում, միշտ չէ, որ նպատակահարմար է: Այնուամենայնիվ ՀԿԲ-ն փորձել է

հոկտեմբերին իր կողմից սպասարկվող էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով (facebook.com/veolia.armenia, Veolia.am, twitter.com/Veolia\_AM, youtube Veolia Jur) ապահովել «Վեոլիա-հանրություն» աշխույժ կապ ու երկխոսություն:

Հաշվետու ժամանակամիջոցի հրապարակումներից ամենակարևորը թերևս Իջևանի ջրամատակարարման արմատական բարելավմանն ուղղված 205 մլն դրամ արժողությամբ համալիր ծրագրի մասին հաղորդագրությունն է, ըստ որի Տավուշի մարզի Լաստիվեր կոչվող տարածքի «Պաղ ջուր» գետակի վրա կառուցվում են ջրընդունիչներ, 2,3 կմ երկարությամբ խողովակաշար, ԶԿԿ և քլորակայան: Աշխատանքներն այնտեղ արդեն սկսվել են և արագ առաջ են գնում:

Հաջորդը «Արզնի 2 – Երևան» մայրուղային ջրատարի 210 մետրանոց շրջանցիկ հատվածը գործող խողովակաշարին միացնելն է: Սա կարևոր է այն առումով, որ Արաբկիրի Կորեայի ձոր հատվածում մայրուղային ջրատարը սողանքի պատճառով շարունակ վթարվում է, ինչը բերում է Արաբկիրի ու Կենտրոնի զգալի հատվածների ջրանջատմանը: Իսկ հիմա ՎեոլիաԹիմի ծրագրի շնորհիվ տարիների պատմություն ունեցող այս խնդիրը լուծվեց: Ընդ որում աշխատանքը պլանային էր, այդ մասին հանրությանը ծանուցվեց վաղօրոք, այնուհետև ներկայացվեց աշխատանքների ընթացքը, իսկ ուշ երեկոյան, ժամը մոտ 23-ին, ՀԿԲ-ն ՖԲ-ի մեր էջում «Եռակցում ավարտվեց» հրապարակմամբ ու կից լուսանկարով ավետեց, որ Վեոլիան հայտարարվածից շուտ ավարտել է աշխատանքն ու վերսկսել ջրամատակարարումը: Դատելով ստացված «Հավանումների» քանակից, նման մոտեցումը խնդրի լուսաբանմանն իրեն արդարացրեց:

Մոտավորապես նույն կերպ վարվեց ՀԿԲ-ն «Գառնի-Երևան» մայրուղային ջրատարի վրա պլանային աշխատանքները լուսաբանելիս: Նախ ծրագրի անխուսափելիության ու կարևորության մասին ՀԿԲ-ն նախօրոք տեղեկացրեց սպառողներին, այնուհետև, ջրատարի կանգառի օրը, ներկայացրեց աշխատանքների ընթացքը ու համոզիչ ցույց տվեց ընթերցողներին, որ ՎեոլիաԹիմն անում է ամեն ինչ մայրուղային ջրատարի աշխատանքը ժամ առաջ վերսկսելու նպատակով:

Ներկայացված տեխնիկական նորամուծություններից, ինչը շատ կարևոր է զարգացման ուղի ընտրած ընկերության համար, կարելի է առանձնացնել ամռանը ձեռք բերված թվով 4 «UAZ Profi»-ների ծածկախցիկներում տեղադրված հոլանդական «Rioned» ընկերության կոյուղու մաքրման փոքրածավալ համալիր սարքավորումների շահագործման մեկնարկը: Նման տեխնիկա Վեոլիան նախկինում չի ունեցել, մինչդեռ կարիքը կար, հատկապես կոյուղագծերի պրոֆիլակտիկ աշխատանքներ իրականացնելու համար:



Մնացածներն ավելի փոքր ծավալների կամ կարևորության աշխատանքներ են, շատերը ընթացիկ բնույթի, սակայն անգամ այստեղ ՀԿԲ-ն ամեն ինչ արել է դրանք հետաքրքրաշարժ, իսկ կարևորությունն ու նշանակությունը հանրությանը հասկանալի ներկայացնելու համար:

Խոսքը, օրինակ, Սիսիանի Բոնակոթ գյուղի 17 հեռու սարերում գտնվող աղբյուրն ու ջրագիծը ձմռանը նախապատրաստելու մասին է, քանի որ ձյան պարագայում այլևս այնտեղ չեն բարձրանա, կամ Դիլիջանի «Գոլովինո» Ջրի մաքրման կայանի «Առաջին շրջադարձ» կոչվող գետային ջրընդունիչի ելքի վերակառուցման մասին, ու նորից ձմռան նախապատրաստական աշխատանքների շրջանակներում:



Հոկտեմբերին նաև կառուցվել և վերակառուցվել են շատ ջրագծեր ու կոյուղագծեր, պոմպակայաններ ու աղբյուրներ Շիրակի մարզում, Հրազդանում, Արամուսում, Մալաթիա-Մեքաստիայում, Աջափնյակում, Ծաղկաձորում, Արգելում, Արթիկում, Մասիսում, Լուսաձորում, Արմավիրի մարզում, Շենգավիթում, Սիսիանում, Դիլիջանում,

Արարկիում: Այս ամենն իր արձագանքն է գտել առաջին հերթին Վեոլիայի ՖԲ էջում:

Իսկ Հրազդանի քաղաքապետարանի հետ համագործակցության ու Մեդրիում ՀՀ ՏԿԵՆ ՏՁՀ-ի կողմից նոր ՋՄԿ-ի կառուցման մասին հրապարակումները նպատակ են ունեցել վկայել Վեոլիայի բաց աշխատանքն ու պատրաստակամությունը աշխատել բոլոր կառույցների հետ հանուն սպառողների կարիքները բավարարելու:

Տեղին օգտագործվել են նաև Վեոլիայի առաջընթացը վկայող պաշտոնական հաղորդագրությունները: Այսպես, ՀՀ ՊԵԿ-ի տվյալներով հունվար-սեպտեմբեր ամիսներին Վեոլիան ՀՀ թիվ 36-րդ խոշոր հարկատուն է, հարկերի և վճարների տեսքով ՀՀ պետական բյուջե վճարված 4.269.466.000 դրամ գումարով: Այդ մասին լուրը տրվել է ցայտուն, ինֆոգրաֆիկայի տեսքով: Ինչպես նաև համակարգում ապօրինությունների դեմ պայքարի 9 ամիսների արդյունքները: Բերված տվյալները լուրջ են, իսկ փաստերը համոզիչ:

Ընդ որում ՀԿԲ-ն փորձ է արել այս ամենի լուսաբանմանը մոտենալ PR ոլորտում կիրառվող «Տեղեկատվություն + Կրթություն» ձևաչափով. ոչ միայն պատմել սպառողին աշխատանքի մասին, այլև կրթել նրան, բացատրել գործի կարևորությունը ու համակարգի բարդությունը, այսպիսով փորձելով դարձնել սպառողին Վեոլիայի համախոհը ջրային ոլորտի բարեփոխումների գործում:

Հոկտեմբերին ընդհանուր առմամբ ՀԿԲ-ն Վեոլիայի facebook.com/veolia.armenia էջում ապահովել է առնվազն 32 հրապարակում համակարգում գրեթե բոլոր ուղղություններով տարվող աշխատանքների մասին, չհաշված խոշոր ջրանջատումների, մրցույթների ու թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները:

Հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, facebook.com/veolia.armenia-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. Veolia.am պաշտոնական կայքում, twitter.com/Veolia\_AM և youtube Veolia Jur էջերում:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



## 5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

● ՈԱԱ Բաժինը, հիմք ընդունելով Վեոլի Գրուպի «Երթևեկությունն աշխատավայրում» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջները, Ընկերության Առևտրային, Գործառնական և Տեխնիկական տնօրինությունների աշխատակիցների աշխատանքային պարտականությունների անվտանգ կազմակերպման և իրականացման մակարդակը բարձրացնելու անհրաժեշտությունը, Ընկերության թվով 181 աշխատակցի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 3 մոդուլից բաղկացած առկա դասընթացները.


- ▶ «Ավտոմեքենաների անվտանգ շահագործում» թեմայով առկա դասընթաց,
- ▶ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունն աշխատավայրում» Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտի պահանջները թեմայով առկա դասընթաց,
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» թեմայով առկա դասընթաց:



● ՈԱԱ բաժինը, հիմք ընդունելով ընկերության աշխատակիցների մասնագիտական որակավորումը բարձրացնելու անհրաժեշտությունը, մատակարարվող խմելու ջրի որակի հսկողության գործընթացի անընդհատ բարելավումը և նմուշառողների՝ խմելու ջրի նմուշառման տեխնիկայի և մեթոդաբանության վերաբերյալ հմտությունների և գիտելիքների ամրապնդման անհրաժեշտությունը, Ջրի որակի վարչության հետ համատեղ ընկերության թվով 1 աշխատողի համար իրականացրեց «Խմելու ջրի որակի հսկողությանը ներկայացվող պահանջները» թեմայով որակավորման տեսական և գործնական դասընթաց:


● ՈԱԱ բաժինը (Որակավորման հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ, 247-րդ հոդվածի 3-րդ մասի և 254-րդ հոդվածի, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ հաստատված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջներով և ելնելով Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջներից, Ընկերության Տեխնիկական Տնօրինության թվով 12 քլորի օպերատորի համար կազմակերպեց և իրականացրեց 3 մոդուլից բաղկացած մասնագիտական որակավորման դասընթաց/գիտելիքների ստուգում.

- ▶ «Քլորակայանի օպերատորի և քլոր տեղափոխող մեքենայի վարորդի» որակավորման առկա դասընթաց/գիտելիքների ստուգում,
- ▶ «Երթևեկությունն աշխատավայրում» Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտի պահանջները թեմայով առկա դասընթաց,
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» առկա դասընթաց:





**2021-2022թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ**




**5.2 ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ**

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայքեր Ընկերության թվով 14 քլորակայանում, 1 վարչական շենքում, 8 պոմպակայանում և 3 ՕԿՋ-ում: Ստուգայքերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 8 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ:

2022 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների



5.3. ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

● ՈԱԱ բաժինը, առաջնորդվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 27 մարտի 2003 թվականի N 347-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, 2022 թվականի հոկտեմբեր ամսվա դրությամբ «Մաստեր Ֆարմ» բժշկական կենտրոնի կողմից պայմանագրային հիմունքներով իրականացրել է խմելու ջրի մաքրման, վարակազերծման և ջրամատակարարման ցանցի սպասարկման աշխատանքներում անմիջականորեն ներգրավված Ընկերության համապատասխան մասնագիտությունների 629 աշխատողի առողջական վիճակի դինամիկ հսկողության, վարակիչ և մակարուծային հիվանդությունների տարածման կանխարգելման և հիվանդությունների հայտնաբերման նպատակով տարեկան պարտադիր թերապևտիկ զննություններ և լաբորատոր հետազոտություններ և անձնական սանիտարական (բժշկական) գրքույկների վարման գործընթացը:

● Ընկերությունը, ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 15/07/2004 թ. N1089-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հաշվետու ամսում պայմանագրային հիմունքներով «Մաստեր Ֆարմ» բժշկական կենտրոնի հետ համատեղ կազմակերպեց արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի փասակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող Ընկերության թվով 665 աշխատողների համար բժշկական զննումներ (թերապևտի, նյարդաբանի, ակնաբույժի օտոլարինգոլոգի մաշկաբանի մոտ) և հետազոտություններ (ֆյուրոնկարախնում) և ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված կարգով բժշկական զննություններ և հետազոտություններ անցած աշխատողների անհատական տեղեկանքների վարման գործընթացը:

5.4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԱԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ, ՏԻՄ-ԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

● Համաձայն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 01.10.2022 թվականի N 01/20/06047-2022 որոշմամբ հաստատված ՀՀ Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022 թվականի հիմնական միջոցառումների պլանի պահանջների՝ հոկտեմբերի 19-ին Ընկերության «Հարավ» շահագործման տնօրինության «Արմավիր» շահագործման տեղամասի մեկ վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնող խումբ՝ իրեն ամրակցված գործիքների լրակազմով և մեքենայով, ՈԱԱ բաժնի համակարգմամբ, մասնակցել է ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում անցկացված՝ «Հրդեհաշիջման և որոնողափրկարարական աշխատանքների իրականացումը ուսումնական հաստատությունում» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնասիրությանը:

● Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 07.09.2022 թվականի N 498-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ Շիրակի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022 թվականի հիմնական



միջոցառումների պլանի պահանջների՝ հոկտեմբերի 7-ին Ընկերության «Հյուսիս» շահագործման տնօրինության «Շիրակ» շահագործման տեղամասի մեկ վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնող խումբ՝ իրեն ամրակցված գործիքների լրակազմով և մեքենայով, ՈԱԱ բաժնի համակարգմամբ, մասնակցել է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքուի գործարանային 1 հասցեում գտնվող տարածքում անցկացված՝ «Երկրաշարժի հետևանքով փլուզված շենքում որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումը հրդեհի առկայությամբ» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժությանը:

● Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 14.10.2022 թվականի № 538-Ս որոշմամբ հաստատված՝ ՀՀ Շիրակի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022 թվականի հիմնական միջոցառումների պլանի պահանջների՝ հոկտեմբերի 19-ին Ընկերության «Հյուսիս» շահագործման տնօրինության «Շիրակ» շահագործման տեղամասը ՈԱԱ բաժնի համակարգմամբ, մասնակցել է «Ճառագայթային վթարների դեպքում ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքից ՀՀ Շիրակի մարզի գյումրի քաղաք տարահանված բնակչության ընդունման և և տեղաբաշխման կազմակերպումը» թեմայով Շտաբային ուսումնավարժությանը:



## 5.5 ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՎ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Բաժինը, ելնելով համակարգերում տեխնաժին վթարների կանխարգելմանն և բացառմանն, ինչպես նաև մարդու կյանքի և առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վթարների բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված աշխատանքների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից, հաշվետու ամսվա ընթացքում իրականացրել է թվով 1 քլորակայանի տեխնիկական անվտանգության վկայագրի և թվով 1 քլորակայանում տեղադրված ամբարձիչ սարքավորման՝ Հավատարմագրված մարմին հանդիսացող «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՍՊԸ-ի փորձագետների կողմից փորձաքննությունների իրականացման և եզրակացությունների ստացման աշխատանքները:

● Բաժինը, «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՍՊԸ-ի փորձագետների հետ համատեղ, պլան-ժամանակացույցի համապատասխան իրականացրել է թվով 31 ԱՎՕ-ի (քլորակայան, ամբարձիչ սարքավորում, մանիպուլյատոր հարմարանքով կախվորված հեղուկ քլոր տեղափոխող ավտոմեքենա) տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



## 6.1. Համակարգչային ցանց

Հոկտեմբեր ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները

- Տրամադրվել են նոր համակարգիչներ և հին համակարգիչները նույնպես վերաբաշխվել են:
- Կատարվել են մոնիտորինգային աշխատանքներ՝ անվտանգության տեսահսկման համակարգերի ուղղությամբ:
- Մի շարք աշխատանքներ են իրականացվել՝ անսարք սարքավորումները փոխարինելու նոր սարքավորումներով, ինչպես նաև տեղադրվել են նորերը:
- Գրուպի կիբերանվտանգության դեպարտամենտի հետ համատեղ մշակվել է նոր կիբերանվտանգությանն ուղղված քաղաքականություն՝ Արդյունաբերական կիբերանվտանգությունը բարձրացնելու նպատակով:
- Ներդրվել են մի շարք կիբերանվտանգության համակարգեր:
- Ներդրվել է նոր ներքին հեռախոսների կառավարման համակարգ, որը թույլ կտա ավելի արդյունավետ կառավարել և ընդլայնել ներքին համարների տրամադրման շառավիղը բոլոր տեղամասերի հետ:
- Իրականացվել են Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացումներ:
- Իրականացվել են Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացումներ:
- Սպասարկվել է մոտավորապես 400-530 զանգ SS բաժնի աջակցության համարով:
- Գրանցվել, սպասարկվել և փակվել է մոտ 600 SS աջակցության տոմս:

## 6.2. Ինտերակտիվ համակարգ

Հոկտեմբեր ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Մի շարք հաշվետվություններ են պատրաստվել և տրամադրվել ՀՄԿՀ և Ջրային Կոմիտե, ինչպես նաև տարբեր ներքին և արտաքին աուդիտորներին:
- Ինտերակտիվ համակարգում կատարվել են փոփոխություններ, կապված Առևտրային սնօրինության և այլ ստորաբաժանումների գործընթացը ավելի ավտոմատիզացնելու հետ:
- Ընկերությունում ներդրվել է Հայփոստ ընկերության Hybrid և Envelop համակարգերը: Կատարվել է մի շարք փոփոխություններ Ինտերակտիվ համակարգում գործառույթների իրականացման ավտոմատիզացման ուղղությամբ Hybrid համակարգի ինտեգրման արդյունքում:
- Ակտեր
- Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորն ներկայացվում են հոկտեմբեր ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Խախտման արձանագրություններ			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. ի/մ	մլն. դրամ
Հյուսիս	9	6.78	1.35
Էրեբունի	4	1.80	0.33
Շենգավիթ	10	13.62	2.67
Կենտրոն	10	6.19	1.24
Արաբկիր	3	0.77	0.16
Մաշտոց	19	17.87	3.36
Շահումյան	6	11.19	2.21
Եղվարդ	34	7.82	1.34
Քանաքեռ-Զեյթուն	3	0.77	0.15
ԱԿԲ	66	57.55	10.88
Լոռի	18	14.27	2.83
Շիրակ	3	1.03	0.19
Արթիկ	1	0.52	0.09
Արարատ	15	1.50	0.27
Աբովյան	9	8.25	1.41
Հրազդան	6	1.47	0.29
Ալավերդի	3	1.29	0.23
Արտաշատ	18	2.11	0.36
Բերդ	1	0.12	0.02
Գավառ	4	1.78	0.32
Իջևան	2	0.11	0.02
Մեղրի	3	1.03	0.19
Արմավիր	1	0.52	0.10
Սևան	2	0.49	0.08
Աշտարակ	2	0.26	0.04
Զարենցավան	1	1.10	0.22
Սպիտակ	2	0.19	0.03
Ստեփանավան	1	0.52	0.09
<b>Ընդամենը</b>	<b>256</b>	<b>160.91</b>	<b>30.49</b>

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ) Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է հոկտեմբեր ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Տեղամաս	Լաբորատորիա			
	Միջամտություն		Անսարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Յյուսիս	15	4.95	31	5.84
Էրեբունի	12	13.14	23	0.73
Շենգավիթ	8	18.86	37	18.57
Կենտրոն	14	5.89	22	5.25
Արաբկիր	21	7.49	37	1.47
Մաշտոց	20	9.18	57	0.74
Շահումյան	27	7.66	61	0.48
Եղվարդ	2	0.29	1	0.01
Քանաքեռ-Զեյթուն	5	1.32	8	0.57
Լոռի	14	174.94	46	0.38
Շիրակ	17	4.65	79	0.49
Արթիկ		-	19	0.07
Արարատ	10	1.21	24	0.11
Աբովյան	3	1.87	35	0.22
Հրազդան	13	3.84	23	0.13
Ալավերդի	2	0.59	12	0.11
Աշոցք	1	0.52	10	0.04
Ապարան		-	3	0.04
Արտաշատ	4	0.43	37	0.40
Բերդ	1	0.26	1	0.00
Գավառ	6	2.89	38	0.44
Գորիս	3	2.58	15	0.09
Եղեգնաձոր	1	0.52	15	0.40
Էջմիածին	8	1.51	6	0.05
Թալին		-	2	0.01
Իջևան	3	0.34	21	0.15
Կապան	7	1.80	16	8.97
Մասիս	23	9.38	35	0.36
Մարտունի		-	9	0.06
Մեղրի	3	0.77	6	0.12
Նոյեմբերյան	1	0.52	20	0.10
Արմավիր	3	1.55	8	0.41
Ջերմուկ		-	1	0.01
Սևան	2	2.78	7	0.01
Աշտարակ	3	1.02	11	0.08
Զարենցավան	20	8.13	32	0.16
Սիսիան	2	1.74	8	0.10
Սպիտակ	1	0.13	33	0.16
Ստեփանավան	1	1.55	3	0.01
Տաշիր		-	2	0.02
<b>ԸՆդամենը</b>	<b>276</b>	<b>294.29</b>	<b>854</b>	<b>47.37</b>





«ՎԵՈՒԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա  
E-mail: info@vjur.am